ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01.11. 2013
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. Կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ զեկուցողները նշեցին, որ ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2013-2014 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված, ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաներ: Ամբիոնային նիստերում քննարկվել են թեմաները, կատարվել են ուղղումներ, շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախասիրությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ:

Ասվեց, որ ավարտական աշխատանքների թեմաները բավարարում են պահանջվող չափանիշները, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն: Շեշտադրվեց այն հանգամանքը, որ թեմաները արդիական են և կարևոր:

Զեկուցողները նշեցին նաև, որ կուրսային աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2013-2014 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված, կուրսային աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաներ: Ամբիոնային նիստերում քննարկվել են դրանք, կատարվել են ուղղումներ, շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախասիրությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Ուշադրության արժանացավ այն փաստը, որը կան թեմաներ, որոնց վերաբերյալ մասնաճյուղում բացակայում է բավարար գրականությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ա. Մարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ ընթացիկ քննությունները անցկացվեցին սահմանված ժամանակացույցով: Քննությունների հարցերը կազմված էին թեստային առաջադրանքների ձևով: Պետք է արձանագրել, որ արդյունքները միջինից բարձր էին: Դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքով. նախ՝ ուսանողների մեծ մասը սկսել է լուրջ ուշադրություն հատկացնել ընթացիկ քննությունների նախապատրաստմանը, երկրորդ՝ դասախոսների մի մասը /ոչ մեծ/ դեռևս չի տիրապետում պրոֆեսիոնալ մակարդակով թեստային առաջադրանքներ կազմելու հմտություններին և երբեմն դրանք կազմված են լինում չափից ավելի հեշտ, երրորդ՝ ընթացիկ քննությունների թեստերը կազմված են լինում վեց շաբաթվա ծրագրային նյութի հիման վրա, ինչից ենթադրվում է, որ ուսանողը սովորելու մեծ ծավալի նյութ չունի, չորրորդ՝ թեստային առաջադրանքների պայմաններում շարունակում է գործել պատահականության գործոնը, պատահական նշումներ կատարելով ուսանողը երբեմն ստանում է բարձր միավոր: Զեկուցողն ասաց, որ առաջին ընթացիկ քննություններից հետո ֆակուլտետում արձանագրվել է հետևյալ պատկերը.

Ֆակուլտետ	Մասնագիտություն	Կուրսը	Ուսանող. թիվը	Ընթ. քնն. և ստուգ. թիվը	Հանձնել են դրական	Ունեն պարտքեր	Առաջադի-մությունը
ՀԳ	*Պատմություն*	*I*	27	6	21	6	77.8%
		II	18	5	13	5	72.2%
		IV	34	6	10	24	29.4%
	Ընդամենը		79	17	44	35	55.7%
	Հայոց լեզու և գրակ.	*I*	19	4	5	14	26.3%
		II	24	6	18	6	75%
		IV	19	7	10	9	52.6%
	Ընդամենը		62	17	33	29	53.2%
	Մանկ. և հոգեբ.	*I*	18	3	16	2	88.9%
		II	9	5	8	1	88.9%
		IV	20	5	19	1	95%
	Ընդամենը		47	13	43	4	91.5%
	Անգլ.լեզու և գրակ.	*I*	29	4	24	5	82.8%
		III	28	3	13	15	46.4%
		IV	28	7	23	5	82.1%
	Ընդամենը		85	14	60	25	70.6%
	Ֆր. լեզու և գրակ.	*I*	10	4	7	3	70%
		II	10	3	10		100%
		IV	12	7	7	5	58.3%
	Ընդամենը		32	14	24	8	75%

դամենը գուլտետում			305	75	204	101	66.9%

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ա. Սարիատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Խաչատրյան